01/10.1/2916-09
2009-05-07

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՆԱԽԱԳԱՀ

պարոն ՀՈՎԻԿ
ԱԲՐԱՀԱՄՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Աբրահամյան

Հայաստանի Հանրապետության կառավարությունը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովի պատգամավորներ Հ. Հակոբյանի, Ս. Ավետիսյանի, Գ. Մելիքյանի և Է. Շարմազանովի՝ օրենսդրական նախաձեռնության կարգով ներկայացրած «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի և կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի նախագծի վերաբերյալ սկզբունքային առարկություններ չունի։

Միաժամանակ, նկատի ունենալով մի կողմից տնտեսական ճգնաժամը, մյուս կողմից՝ երկրի երկարաժամկետ ռազմավարության «Կայուն զարգացման ծրագրում» ամրագրված թիրախների ապահովումը, առաջարկում ենք քննարկել նախագծով նախատեսված ժամկետի փոփոխման հարցը։

Հայտնում ենք, որ, ներկայացված օրենքի նախագիծը Հայաստանի Հանրապետության Ազգային ժողովում քննարկելիս, հարակից զեկուցմամբ հանդես կգա Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարի տեղակալ Վ. Արամյանը։

Հարգանքով՝

ՏԻԳՐԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ

Նախագիծ

Պ-575-19.03.2009-ՍՀ-010/0

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ՕՐԵՆՔԸ

«Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին

Հոդված 1. «Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության 2004 թվականի ապրիլի 6-ի ՀՕ-53-Ն օրենքի (ասուհետ՝ Օրենք) 5-րդ հոդվածի 3-րդ մասի «երեք» բառը փոխարինել «յոթ» բառով։

Հոդված 2. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրվանից։

Հիմնավորում

«Կենսաապահովման նվազագույն զամբյուղի եւ կենսաապահովման նվազագույն բյուջեի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի ընդունման անհրաժեշտության

Նախագծով առաջարկվող փոփոխությունը պայմանավորված է կենսաապահովման նվազագույն զամբյուղի կազմը եւ կառուցվածքը սահմանելու ժամկետների հստակեցմամբ։

Հեղինակներ՝ Հակոբ Հակոբյան, Սուքիաս Ավետիսյան, Գագիկ Մելիքյան, Էդուարդ Շարմազանով